«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինտեգրված պարապմունքի կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

Հաստատություն՝ Երևանի Հ. 157 մսուր- մանկապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Իրինա Դավթյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն----------3

Սովորողների ճանաչողական հմտություններ, գործնական կարողություններ ձևավորող և խմբային գործունեության ձևերը----------**4-6**

Պարապմունքի պլանավորում----------**7**

Ինտեգրված պարապմունքի կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում: Հայկական գորգեր ----------**8-10**

Եզրակացություն----------**13**

Գրականության ցանկ----------**15**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական կրթության կարևոր նպատակներից է՝ երեխաների մեջ սերմանել և մշակել այնպիսի որակներ ու հատկություններ, ինչպիսիք են՝ քննադատական մտածողությունը , հետաքրքրքսիրությունը , անմիջականությունը, զարմանքը , երևակայությունը և աշխատանքից գեղագիտական հաճույք ստանալու ունակությունը: Բոլոր երեխաներն էլ փոքր հասակից օժտված են լինում այս որակներով , բայց հաճախ կյանքի առաջին տասնյամակում կորցնում են դրանք: Մինչ դեռ այդ հատկությունները կարևոր դեր են խաղում սովորելու գործընթացում ; Այս նպատակի հասնելու ուղին մանկապարտեզում ուսումնառությունն ինտեգրված պարապմունքների միջոցով կազմակերպելն է:
Ինտեգրված պարապմունքը ժամանակակից մեթոդիկայի նորույթներից է : Այն միավորում է տարբեր առարկաներից ուսուցանվող թեմաները և ստեղծում միջառարկաայական կապերով հարուստ պարապմունք: Ինտեգրված պարապմունքների ժամանակ ձեռք բերված գիտելիքները կայուն են : Ինտեգրված պարապմունքների նպատակն է՝ երեխաների մեջ սերմանել աշխատասիրություն , մշակել այնպիսի կամային որակներ , ինչպիսիք են՝ հետաքրքրասիրությունը և երևակայությունը:

<< Ինտեգրում >> ասելով նկատառվում է՝ իմաստով և ձևով միյանց լրացնող, տարբեր առարկաների և ուսումնական նյութերի միասնական ամբողջությունն է : Այն չափազանց գրավիչ ձև է, քանի որ նյութի վերաբերյալ սովորողներին լիարժեք պատկերացումներ է տալիս: Ինտեգրված պարապմունք իրականացնելու համար պահանջվում է նախապատրաստական լուրջ ջանքեր: Նախապատրաստությունը սկսվում է պարապմունքի մանրամասն պլան կազմելով : Փուլ առ փուլ , քայլ առ քայլ պլանավորվում է պարապմունքը: Յուրաքանչյուր փուլ ցույց է տալիս, թե ինպես ճիշտ օգտագործել ժամանակը: Ինտեգրված պարապմունքը ոչ միայն արդյունավետ է երեխաներին , այլև արդյունավետ է դաստիարակներին , որն էլ մղում է ինքնակատարելագործման՝ ձեռք բերելով նոր հմտություններ , զ արգացնում թիմում աշխատելու կարողություններն և ձևավորում միջանձնային ջերմ հարաբերություններ

Սովորողների ճանաչողական հմտություններ, գործնական կարողություններ ձևավորող և խմբային գործունեության ձևերը

Ճանաչողական զարգացումն այն գործընթացն է , որով զարգանում են հմտությունները պրակտիկայի , փորձերի և սովորելու միջոցով ; Այս հմտությունները տատանվում են պարզ գործողություններից դեպի բարդ գործողությունները ; Ճանաչողական ոլորտը ներառում է զգայություն , ըմբռում, մտապատկեր, հիշողություն , ուշադրություն , երևակայություն, մտածողություն , խոսք: Սրանց շնորհիվ երեխան տեղեկություն է ստանում իր և շրջապատող աշխարհի մասին:

Ճանաչողական զարգացումը վերաբերում է անհատի ունակություններին, փորձի և տեղեկատվության իմացություն և գիտելիքներ ձեռք բերելու համար: Սակայն ճանաչումն ավելին է , քան նոր տեղեկատվություն ստանալը : Այսպիսով, ինչպես ենք մտածում և նոր տեղեկատվություն մշակելու և տարածելու մասին. Այն նաև ներառում է, թե ինչպես ենք մենք օգտագործում նոր տեղեկատվություն ՝ նախապես ձեռք բերված գիտելիքների նկատմամբ: Երբ երեխաները աճում են , նրանց մտածողության հմտությունները զգալիորեն բարելավվում են : Նրանք կարողանում են մտածել և արտահայտել իրենց բարձր մակարդակներում: Մինչև մանկապարտեզի տարիքը երեխան մտածում է իրերի մասին և արտահայտում է մի շարք նոր ուղիներ:

Կրթադաստիարակչական աշխատանքները պետք է կազմակերպել երեխաների տարիքային և զարգացման առանձնահատկությունների հիման վրա , որտեղ երեխան ընդունակ է պատճառահետևանքային կապեր տեսնել ՝երևույթների ,

իրադարձությունների միջև, ճանաչել առարկաների և օբյեկտերի թաքնված կապերը, հարաբերությունները , ճանաչողական հետքրքրություն աշխարհի առարկաների և երևույթների , ինչպես նաև հարաբերությունների կառուցման հանդեպ.; Երեխան հաճույքով, ակտիվ ներգրավվում է գործունեության տարբեր ձևերի , մտավոր տարբեր գործողությունների, նոր բացահայտումների մեջ: Կրթական ծրագրերը պետք է նպատակաուղղված լինեն հետաքրքրասիրության զարգացմանը՝ որպես նախադպրոցականի ճանաչողական ակտիվության դրսևորման գործոն:

Գործնական կարողություններ - Ուսուցման կազմակերպման մեկ այլ ձև է գործնական պարապմունքը: Գործնական մեթոդների հիմնական տեսակներն են՝ վարժությունները, լաբարատոր պարապմունքները, գործնական առաջադրանքները , ուսուցողական խաղերը : Գործնական աշխատանքի հիմնական նպատակն է երեխաների ձեռք բերած գիտելիքների կիրառումը , դրանց գործնական բնույթ

հաղորդելը , ամրապնդումը և կարողությունների ու հմտությունների ձևավորումը:

Գործնական պարապմունքի մեթոդին վերագրվում է նաև գիտելիքների խորացման և ամրապնդման գործառույթը: Լաբարատոր աշխատանքի հիմնական գործառույթն է երեխաներին մոտեցնել գիտափորձարարական – հետազոտական աշխատանքներին: Գործնական աշխատանքը երեխայի ինքնուրույն գործունեեության տեսակ է, որը հնարավորություն է տալիս զարգացնել ինքնուրույն ճանաչողական մտածողությունը: Կրթության գլխավոր նպատակը ոչ միայն գիտելիքներ տալն է , այլ նաև դրանք գործնականում կիրառել կարողանալը :

Երեխան պետք է կարողանա կատարել իրեն տված առաջադրանքը, դնի նպատակ , գտնի դրանց լուծման ճանապարհը, պլանավորի իր անելիքը , ստանա արդյունք և կատարի եզրահանգում: Գործնական աշխատանքների ժամանակ երեխան պետք է ունենա ընտրության հնարավորություն , կարողանա ինքնուրույն առաջադրանքներ կատարի , որը խթանում է երեխաների ստեղծագործական մտածողությունը , հմտությունը , եզրահանգումը , իմացական հետաքրքրությունները:

.**Խմբային** գործունեության անհրաժեշտ պայմաններն են ` ազատ հաղորդակցումն ու շփումը , դիմացինին լսելու , հասկանալու , մտածված պատասխան տալու կարողությունը , հանդուրժողականությունը , համագործակցությունը , իր և խմբի անդամների ուսումնառության աշխատանքի և հաջողության համար պատասխանատվությունը;

Գործունեության ձևերն են ` համատեղ ստեղծագործական աշխատանքը , զրույցերը, բանավեճը , քննարկումները, միջոցառումներ նախապատրաստելը և իրականացնելը: Խմբային աշխատանքների գործունեությունը հիմնականում է խաղերի , վարժությունների , պատկերների , համեմատությունների միջոցով; Ելնելով երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկություններից , փոխվում է ուսուցման նպատակները, խնդիրները: Համագործակցությունը խմբերում հնարավորություն է տալիս հասկանալու, որ իրենց հաջողությունը կախված է խմբի բոլոր անդամների ներդրումներից ; Նման խմբերին բնորոշ նպատակին հասնելու համար առավելագույնն անելու ցանկությունը ու փոխկապակցվածությունը , սոցիալական հմտությունները, խմբի աշխատանքի ընթացքը և արդյունքը մշտապես գնահատելու, վերանայելու կարողությունները : Դաստիարակի խնդիրն է առաջադրանքներ կառուցել այնպես, որ երեխաները համագործակցելու կարիք ունենան: Այս մեթոդը նախատեսում է խմբի երեխաներին թիմերի բաժանել , ովքեր հանձնարարված առաջադրանքները կատարում են խմբով:

Խմբային համագործակցային մեթոդն ակտիվացնում է , բարձրացնում նրանց հետաքրքրասիրությունը կատարվող գործողության նկատմամբ:

Պարապմունքի պլան

Թեմա՝ Ինտեգրված պարապմունքի կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

Ինտեգրվող թեմա՝ **<<Հայկական գորգեր** >> Խոսքի զարգացում +երաժշտություն+ ոչ ավանդական ապլիկացիա

Խումբ՝ Ավագ <<Բ>>

Տևողությունը՝ 45 րոպե

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝

- ✓ Ծանոթացնել երեխաների հայ մշակույթի կարևորագույն տարրերից մեկին՝ գորգերին՝ դրան պատմությանը , անցած ուղին , աշխատանքային հնամենի գործիքներին;
- ✓ Ամրապնդել ոչ ավանդական մեթոդներով և բնական նյութերով և կոլեկտիվ աշխատելու կարողությունը:
- ✓ Զարգացնել կապակցված խոսքը , հարցերին ամբողջական պատասխանելու ունակությունը , հիշողությունը , ճանաչողականությունը , մատների մանր մոտորիկան , աչքաչափը և գեղագիտական ճաշակը , մաքուր աշխատելու ունակությունը,
- ✓ Դաստիարակել սեր և հարգանք մեր մշակութային արժեքների նկատմամբ , ճանաչեն ազգային մշակութային նմուշների ինքնատիպությունը .
- ✓ Հարստացնել բառապաշարը՝ կտուտ, տորք, սանդերք, ճախարակ, իլիկ , բազրիկ, միրիզա, վիշապագործ, կենաց ծառ բառերով.

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝ զրույց , հարց ու պատասխան, ցուցադրում , գործնական աշխատանք ,

Միջառարկայական կապ՝ Խոսքի զարգացում + կերպարվեստ

Միջավայրի ստեղծում՝ Հայկական գորգեր, իլիկ, ճախարակ, սանդերք , տարազային հագուստներ , մեծադիր նկարներ ՝ հայկական գորգերի պատկերներով

Գործնական մաս

Ստորև ներկայացնում եմ իմ անցկացրած պարապմունքը ՝

2.Պարապմունքի ընթացքը

Օգտագործեցի տեխնոլոգիայի մեթոդ, պարապմունքը սկսեցինք տեսաերիզի դիտումով ։Հրավիրելով երեխաների ուշադրությունը հայկական գորգերի վրա, երեխաներին ներգրավվեցի քննարկվելիք նյութի մեջ, ձևավորեցի գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում։ Մտագրոհ մեթոդի միջոցով վեր հանեցի երեխաների տարրական գիտելիքները գորգերի մասին , անվանեցինք և ցուցադրեցինք դրանք։

Նշեցի որ այսօր զրուցելու ենք հայկական մշակույթի կարևորագույն նմուշներից մեկի մասին ։ Պատմել գորգերի անցման ուղղու մասին և երեխաներին ուղղեցի հետևյալ հարցը.

1. Ո՞ր հայտնի ճարտարապետն է հիացել հայկական գորգերով
2. Ի՞նչ հայտնի գորգ են գտել Հառիճի դամբարանում
3. Ինչպիսի՞ թելերով են գորգեր գործում և որ ոչխարի բուրդն են օգտագործում մեծամասամբ
4. Ինչի՞ վրա են գործում գորգը
5. Ի՞նչ աշխատանքային գործիքներ են անհրաժեշտ
6. Ինչի՞ց են պատրաստել և ներկել թելերը / կարմիր, դեղին, կանաչ, սև, կապույտ/
7. Ի՞նչ նշանակություն ունեն գորգերը եկեղեցական կյանքում
8. Ի՞նչ նշանակություն ունեն գորգերը Հայաստանի համար
9. Ի՞նչ գիտեք Վաչագանի ու Անահիտի մասին
10. Ինչպիսի՞ նախշեր են լինում / բուսականՆ , կենդանական , երկրաչափական և աբստրակտ/

Օգտագործեցի ակտիվ մասնակցելու մեթոդը , որի միջոցով նպաստեցի ազատ մտածելուն , արտահայտման հնարավորություն ստեղծելուն.
Ճշտեցի և ամրապնդեցի երեխաների պատասխանները , խրախուսեցի նրանց , ապա առաջարկեցի երգել մի գեղեցիկ երգ;

ԵՐԳ՝ <<Մանիր-Մանիր իմ ճախարակ>>

Երգից հետո հրավիրել երեխաների ուշադրությունը սեղանների վրա դրված պարագաներին՝ բնական նյութերի վրա / գունավոր թելեր/, հիշեցնել թե ինչպես պետք է աշխատել : Աշխատանքը իրականացվում է մեղմ երաժշտության ներքո: Հիշեցնում եմ երեխաներին , որ աշխատանքը կատարում ենք մաքուր և կոկիկ: Աշխատանքի ընթացքում մոտենալ և օգնել դժվարացող երեխաներին , խրախուսել բոլորին , հետևել , որպեսզի աշխատեն ճիշտ և կոկիկ: Նշել նաև , որ այսօրվա մեր գործը նման է բազրիկի, յուրաքանչյուր փոքրիկ գործի օգնությամբ պատրաստելու ենք մեծ գործ : Ավարտելով աշխատանքը երեխաներին ցուցադրվեց իրենց պատրաստած մեծ գործը , նշել որ համախբված լինելու օգնությամբ մենք ավելի ուժեղ ենք և հզոր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման արդյունքում , երեխաների մոտ ձևավորվում է ճանաչողական գործունեությունը , որը նպաստում է երեխաների մտավոր զարգացվածության մակարդակի և անձնային հատկանիշների ձևավորմանը.; Նախադպրոցական տարիքի երեխաների ճանաչողական զարգացումը ակտիվացնում է նրանց մտածողությունը : Ներդաշնակ ճանաչողական զարգացումը կոչված է բացահայտելու յուրաքանչյուր երեխայի անհատականությունը . նրանց մտածողությունը տարբերվում է մնացածից։

Կրթության գլխավոր նպատակը ոչ միայն գիտելիքներ տալն է , այլ նաև դրանք գործնականում կիրառել կարողանալը : Երեխան պետք է կարողանա կատարել իրեն տված առաջադրանքը, դնի նպատակ , գտնի դրանց լուծման ճանապարհը, պլանավորի իր անելիքը , ստանա արդյունք և կատարի եզրահանգում։

Իրականացված պարապմունքի արդյունքում , եկա այն եզրահանգման , ակնհայտ երևում էր երեխաների ինքնուրույնությունը և ակտիվությունը , խմբային աշխատանքի ընթացքում ՝ համագործակցելու կարողությունը ,կազմակերպված էր ոչ պարտադրանքի , ոչ լարված մթնոլորտում : Երեխաների մեծ մասը կարողանում էին փորձարարական աշխատանքների արդյունքում կատարել պատճառահետևանքային կապեր , տեսնել արդյունքը , որտեղ ներգրավված գործունեության մեջ դրսևորում են ակտիվություն , ճանաչողական հետաքրքրասիրություն առարկաների և երևույթների միջև։ Պարապմունքի ընթացքում երեխաները տեսնում և հասկանում են առարկայական ոլորտների միջև եղած կապերն ու դրանց կապը կյանքի հետ։ Գործնական աշխատանքի ընթացքում երեխաները ինքնուրույն էին որը հնարավորություն է տալիս զարգացնելու ինքնուրույն ճանաչողական մտածողությունը; Խմբային գործունեության ընթացքում երեխաները ազատ են հաղորդակցման ու շփման մեջ , լսում են դիմացինին , հասկանում , կարողանում են տալ մտածված պատասխան , հանդուրժող են , համագործակցող , իրենց և խմբի անդամների ուսումնառության աշխատանքի և հաջողության համար ունեն պատասխանատվությունը;

Ինտեգրված պարապմունքի ընտրված ձևը և կառուցվածքը նպատակային էր այնքանով , որ երեխաների համար ստեղծված էր համապատասխան միջավար, որն

էլ իր հերթին նպաստում էր , որ երեխաները ավելի ուշադիր , հաճույքով և մեծ հետաքրքրությամբ ներգրավեն ուսումնական գործընթացում. Հետազոտության արդյունքում համոզվեցի , որ ինտեգրված պարապմունքները նպաստում են նաև երեխաների միջև խաղային և խոսքային փոխհարաբերությունների կայացմանը ,ինչպես նաև հիշողությոն , իմացական և հուզական ոլորտների զարգացմանը։

Գրականության ցանկ

1. **Մանկապարտեզի ավագ խմբի /5-6տարեկանների /կրթական համալիր ծրագիր , Երևան 2007**
2. **Ս.** Չիբուխչյան << Մայրենի լեզվի պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում >> , Երևան 2011, ուսումնական ձեռնարկ
3. **Լ.** Սմբատյան , Լ. Սարգսյան << Կերպարվեստային պարապմունքների կազմակերպումը մանկապարտեզի միջին խմբում>> Երևան 2016, ուսումնական ձեռնարկ
4. **Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ**
5. **Նախաշավիղ՝ 7.2011թ, 4-5.2008թ. 5-6.2004**
6. **Էլեկտրոնային հարթակ Կ. Ղազարյան << Երաժշտական խաղեր>>**